ԼԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ՝ ՁՈՒՐԸ ԳՅԻՐ...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS, ՀՈՒՆԻՍ 2015, թիվ 28 БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆՈՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՌԱՄՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Բերձորի՝ Մեծ եղեռնի զոհերի 100-ամյակի նորաստեղծ այգում հիշատակի ծառեր տնկեցին (առաջին շարքում աջից ձախ) Գուրգեն Մելիքյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը: Բոլոր ներկաները՝ Քաշաթաղի շրջանի վարչակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ունկնդրում են Գ.Մելիքյանի աղոթքը՝ Լևոն-Զավեն Սյուրմելյանի «Ասացվածք ծառ տնկելու մասին» բանաստեղծությունը և մի-մի թաս գինով օրհնում ծառատունկը նորաբաց այգում.

Տե՛ր , օրհնե՛ ծառն այս մատղաշ: Ես կը տնկեմ զայն ահա
Փխրուն և սև հողի մեջ, ուր պապերս կը պառկին.
Ես՝ անոնց թոռը հսկա, այս հողին տերն եմ կրկին
Եվ արևուն տակ կ՚աճիմ՝ անունն իրենց շուրթիս վրա:

Երկաթագիր պատմությունն այս մտերիմ հողերուն
Աչքիս արցունք կը բերե... Փառք ու մեռել շատ ունի
Երկիրն իմ հին , ալևոր՝ որուն ես թոռն եմ վայրի
Խոկումներով բեղմնավոր, երազներով օրորուն:
Մեռելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հարցազրույց ԵՊՀ ռեկտոր, ՀՀ գիտությունների ազգային
ակադեմիայի թղթակից անդամ պրն Արամ Սիմոնյանի հետ

Պրն Սիմոնյան, Երևանի պետական համալսարանը միշտ էլ եղել հայոց պատմությունն ու ներկան ապագային շաղկապող կարևորագույն օղակ և վճռական դերակատարություն ունեցել ինչպես հայրենական գիտության և հոգևոր մշակույթի զարգացման, աճող սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության, այնպես էլ ցեղասպանության դատապարտման ու նրա համաշխարհային ճանաչման և հայոց պահանջատիրության խնդրի բարձրացման գործում: Ի՞նչ ծրագրեր և միջոցառումներ է հայոց մայր բուհն իրականացնում Մեծ եղեռնի 100-ամյակի առթիվ: Արդեն հայտնի են ԵՊՀ արևելյան մուտքի մոտ հիշատակի և երախտագիտության ծառուղու արձանաշարը՝ նվիրված մեր մեծ ողբերգության օրերին ի պաշտպա-

նություն բնաջնջվող հայ ժողովրդի իրենց բողոքի ձայնը բարձրացրած և գործնական օգնություն ցուցաբերած օտարազգի մեծ մարդասերներին, Արցախում Մեծ եղեռնի100-ամյակի այգու հիմնադրումը ծառատունկով, համալսարանի ուսանողների և աշխատակիցների ձեռքով մայր Արաքսի ջրերում մեկուկես միլիոն սրբադասված նահատակների հիշատակին ծաղկեպսակների իջեցումը, համալսարանի բոլոր ֆակուլտետներում գիտական նստաշրջանների անցկացումը, գիտական արժեքավոր հրատարակությունները և այլն, և այլն:

Խնդրում եմ՝ մեր հիմնադրամի «Բարեգործ» պաշտոնաթերթի ընթերցողներին համառոտակի ներկայացրեք համալսարանական միջոցառումների նպատակն ու բովանդակությունը:

– Ձեր ծավալուն հարցադրման մեջ արդեն ներկայացրիք մեր իրականացրած միջոցառումներից մի քանիսը, որոնց կենսագործումը քիչ ջանքեր ու ներդրումներ չի պահանջել համալսարանից:

Միջոցառումները մենք ծրագրել էին վաղուց՝ դեռևս անցյալ տարվանից, և նրանց մասնակցում են համալսարանի բոլոր ստորաբաժանումները՝ իրավագիտության, արևելագիտության, բանասիրության, պատմության, սոցիոլոգիայի և մյուս ֆակուլտետները:

Կազմակերպվել և իրականացվում են տասնմեկ տարաբնույթ գիտաժողովներ, որոնց մի մասը միջազգային: Տարբեր լեզուներով՝ ռուսերենով ֆրանսերենով, անգլերենով, գերմաներենով և այլն, հրատարակում ենք ցեղասպանությանը նվիրված գրքեր, որոնց հեղինակները համալսարանի դասախոսներն են ու երիտասարդ գիտնականները, իրականացնում ենք օտար լեզուներից նույն թեմայով բազմաթիվ գրքերի թարգմանություններ:

Արդեն նեցիք, որ բացել ենք Հիշատակի և երախտագիտության քանդակազարդ ծառուղին՝ նվիրված մեր ժողովրդի՝ օտարազգի լավ բարեկամներին, ովքեր, իրենց պետության քաղաքականությունից ու դիրքորոշումից, իրենց ազգային պատկանելությունից անկախ, ողբերգական իրադարձությունների ընթացքում և անմիջապես հետո դատապարտել են ցեղասպանի հակամարդկային ոճրագործությունները, խոսքով ու մանավանդ գործով հայությանը սատար են եղել մեր ողբերգության դժնդակ օրերին: Երախտագետ սերունդները այսուհետև նաև կիսանդրիներով կհիշեն Ֆրիտյոֆ Նանսենին, Անատոլ Ֆրանսի, Ֆրանց Վերֆելի, Հենրի Մորգենթաուի, Ջեյմս Բրայսի, Յակով Քյունցլերի, Պիեռ Քիյարի, Կարեն Եփփեի, Ռաֆայել Լեմկինի և մյուսների պայծառ դեմքերը:

Երիտասարդական միջոցառումներից կառանձնացնեի գոնե երկու կարևորները. նախ՝ Արցախում՝ Բերձորում, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հետ միասին ուսանողների ձեռքով Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված պուրակի հիմնումը, որին մասնակցեցին նաև մեր համալսարանի աշխատակիցները: Սա, իհարկե, արդեն ավանդույթ դարձած, տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը, հիմնադրամի պարբերաբար իրականացրած ծառատունկի շարունակությունն է, որին այս անգամ մասնակցում էր նաև Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը:

- *Պրն Սիմոնյան, կներեք՝ Ձեզ ընդհատեմ միջանկյալ մի հարցով. քիչ առաջ հիշեցիք «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամը:Որպես համալսարանի ռեկտոր: ինչպե՞ս եք գնահատում նրա գործունեությունն ու բարեգործական ծրագրերը:*

- Անշո՛ւշտ՝ լավ: Մենք գիտենք, որ այդ հիմնադրամն իր գումարները ստանում է հիմնականում սփյուռքահայ բարեգործներից: Հիմնադրամն այժմ օգնում է նաև Քարոլան և Ձորջ Նաջարյանների անվան «Արփեն» մոր ու մանկան կենտրոնին: Բարեգործական այդ մարմինն իր գործունեությամբ օգնում է ոչ միայն Արցախի Քաշաթաղում բնակվող կարիքավոր բազմազավակ ընտանիքներին, մայրացող կանանց ու նորածիններին՝ նրանց տրամադրելով բուժօգնություն, կով, հագուստ, սնունդ և այլն, այլև տարիներ շարունակ օգնել և օգնում է Արցախի, մեր համալսարանի և հանրապետության մյուս բուհերի հարյուրավոր անվճարունակ ուսանողների՝ ամբողջովին կամ մասամբ մուծելով նրանց ուսումնական վարձավճարները: Հիմնադրամը բազմաթիվ հայրենասիրական ու մշակութային միջոցառումներ է իրագործում. դրանցից մեկն էլ, ահա, Մեծ եղեռնի 100-ամյակի համալսարանական միջոցառումներին ակտիվ մասնակցությունն է:

- *Պրն Սիմոնյան, համալսարանական միջոցառումներն իրականացվում են միայն Հայաստանի և Արցախ՞ շրջանակներում, թե՞ ունեն և այլ ընդգրկումներ:*

- Ո՛չ, իհարկե: Պետք է ընդգծեմ, որ մեր դասախոսներն ու գիտնականները լայն մասնակցություն ունեն նաև արտասահմանյան միջոցառումներին, հաճախ են հրավերով կամ մեր նախաձեռնությամբ մեկնում գործուղման, հանդես են գալիս բանախոսություններով, մասնակցում բանավեճերի, սեմինարների, կլոր սեղանների և այլն: Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դասախոսներից մի քանիսը առաջիկայում Իտալիայում մասնակցելու են ցեղասպանությանը նվիրված ներկայացուցչական մեծ գիտաժողովի, այդպիսի առաքելությամբ արտասահման կմեկնեն իրավաբանության, պատմության և մյուս ֆակուլտետների ներկայացուցիչները:

- Կարևոր է և այն, որ այս գործընթացներին պրոֆեսորադասախոսական կազմի հետ մեկտեղ եռանդով

մասնակցում է ուսանողությունը՝ երիտասարդական կազմակերպությունների նախաձեռնությամբ: Ուսանողական գիտական ընկերությունն ինքն է կազմակերպում Ցեղասպանության ու Մեծ եղեռնի հետ կապված գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, հետազոտական աշխատանքներ են կատարվում հայոց ազգային - ազատագրական շարժումների, ազատամարտերի պատմության բնագավառում, ուսումնասիրվում են արցախյան հերոսամարտի նյութերը: Թեև շատ բան է հայտնի, բայց դեռևս կան լուսաբանման կարոտ մութ էջեր, նոր հայտնաբերվող վավերագրեր, որոնց ուսումնասիրությամբ ամբողջանում է մեր պատմությունը, զարգանում մեր ժողովրդի հասարակական - քաղաքական միտքը:

Միջոցառումները կայացել են և շարունակվելու են ամբողջ տարվա ընթացքում:Հենց վերջերս համալսարանի հիմնադիր մասնաշենքի բակում՝ պատմության, տնտեսագիտության, հայ բանասիրության, փիլիսոփայության ու սոցիոլոգիայի ֆակուլտետների շրջափակում պատշաճ հանդիսավորությամբ բացեցինք սրբադասված նահատակների հիշատակը հավերժացնող յոթ մետրանոց հուշասյուն-կոթողը, նշեցինք Հայաստանի ազգային հերոս, մեր համալսարանի երբեմնի ուսանող Թաթուլ Կրպեյանի հիսունամյակը:

Այս բովանդակությամբ միջոցառումները պետք են հատկապես ուսանող երիտասարդությանը: Դրանք մեծապես նպաստում են երիտասարդության աշխարհայացքի և իմացությունների ընդլայնմանը, նրանց մեջ ամրապնդում են բարոյականային բարձր հատկանիշներ, սերմանում սեր և նվիրվածություն մեր հայրենիքի, մեր այնքանդժվարություններով ու զոհողություններով վերականգնած հայոց պետականության հանդեպ:

Միջոցառումները, որ շարունակվելու են ամբողջ տարվա ընթացքում և նրանից հետո էլ, իրականացնում ենք ոչ միայն միլիոնավոր անմեղ զոհերի ոգեկոչման, մեր ժողովրդի պատմական հիշողությունը վառ պահելու, այլև այն նպատակով, որ Երևանի պետական համալսարանը նույնպես իր թեկուզ փոքրիկ ներդրումն ունենա Հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչման մեջ, պատմական արդարության հաղթանակի և մեր պահանջատիրության ու հատուցման գործընթացներում:

-Պրն Սիմոնյան, շնորհակալություն իրոք բովանդակալից հարցազրույցի համար:

Շուտով կայանալու են համալսարանի ռեկտորի նոր ընտրություններ: Մեր թերթի բոլոր ընթերցողների անունից հաջողություն եմ մաղթում Ձեզ գալիք ընտրություններում: Համոզված եմ, որ ընտրվելու դեպքում Դուք շարունակելու եք նվիրյալ համալսարանականի Ձեր հայրենաշեն գործը նոր եռանդով ու ստեղծագործական նոր ծրագրերով, նպաստելու եք համալսարանի գիտական ներուժի զորացմանը, նրա միջազգային կապերի ընդլայմանն ու հեղինակության բարձրացմանը, առաջ եք մղելու մեր կյանքի բոլոր ոլորտների համար որակյալ մասնագետներ պատրաստելու սրբազան գործը:

Հարցազրույցը վարեց՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի տարածքում Մեծ եղեռնի 100-ամյակի առթիվ հիմնված պուրակի հատակագիծը

ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (սկիզբը՝ նախորդ համարներում)

Հ/Հ	Ամսաթիվ	Անուն, ազգանուն	Նպատակը	Գումարը ՀՀ դրամով
218	01/12/2014	Իսրայելյան Արթուր	Օգնության գրքերի ծրագրին Ա. Իսրայելյանի կողմից	90 000
219	04/12/14	COWANSVILLE HOLDINGS LIMITSD	CHARITY ISN 002581 OSN 024574 SSN 01175588 / RFB/ZD 81332TI3850868 – 9960 USD	4 407 100
220	05/12/14	EXOIL TRADING SA	CHARITY ISN 004385 OSN 029325 SSN 0204657 / RFB/ZD 81338TI6884275 – 9960 USD	4 460 685
221	08/12/14	Խաչատրյան Էդիկ	Tree project in the memory of the Vahagn Mahtesi Hakobiants. Edik & Julieta Khachatrian – 50 USD	22 950
222	08/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ սիրելի Շահեն Գաբրիելյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
223	08/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Ռայա Մաչտիրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /05.12.14/	20 000
224	08/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ շատ սիրելի Լավրենտի Բարսեղյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
225	20/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Սոսի Իգնատյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /18.12.14/	20 000
226	20/12/14	Արցախի ազգային վիճակախաղ ՓԲԸ	Վաճառված տոմսերի դիմաց	64 000
227	23/12/14	Սիմոնյան Արամ	Օգնություն Վլադիմիր Մանասյան	9 800
228	24/12/14	Խաչատրյան Արտուշ	Փոխատվական գումարի վերադարձ	200 000
229	27/12/14	Կյուրեղյան Վարուժ	Օգնություն Վարուժ և Էմմա Կյուրեղյաններ – 1500 USD	693 000
230	27/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Սաքո Բաղդասարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
231	27/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Հասմիկ Սարոյանի /Տարաքչյանի/ հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.12.14/	20 000
232	29/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ մեր սիրելի Վարուժան Ծառուկյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /05.12.14/	20 000
233	29/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Հաբեթ Սեդրակյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
234	29/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Գայանե Սարգսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
235	29/12/14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ ՝ Սոսի Իգիթյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /18.12.14/	20 000
236	30/12/14	Մոսոյան Սարգիս	Օգնություն ծառերի ծրագրին՝ բժիշկ Մոսոյան Սարգիս – 100 EUR	58 000
237	12/01/2015	SHANAZARIAN HENRIK SJUTOMTAVAGEN 15 B 756 46 UPPSALA	Tree project for Vahagn Mahtesi Hakobiants – 480 USD	227 966
238	23/01/15	Մելքոնյան Ռուբեն Հովի. Ruben Melkonyan	Օգնություն	70 000
239	10/02/15	Պողոս Պետրոսյան	Օգնություն	100 000
240	11/02/15	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Լևոն Մովսեսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /11.02.15/	20 000
241	02/03/15	Գուրգեն Մելիքյան	Օգնություն Rymond Sinani – 1 000 USD	480 500
242	02/03/15	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ մեծ հայ Սերոբ Սաղյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.01.15/	20 000
243	02/03/15	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ մեր անչափ սիրելի Անահիտ Քոչարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /14.01.15/	20 000

244	**02/03/15**	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Աշոտ Քեխյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /10.01.15/	**20 000**
245	11/03/15	Երևանի պետական համալսարան ՊՈԱԿ	ԵՊՀ 95-ամյակի հետ կապված միջոցառման կազմակերպման համար բարեգործություն	**750 000**
246	18/03/15	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Աշոտ Աբաջյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /17.03.15/	20 000
247	20/03/15	Գուրգեն Մելիքյան	Օգնություն ծառերի ծրագրին՝ Աղաձոր գյուղի բնակիչ 19.03.2015 թ. զոհված հայոց բանակի քաջարի զինվոր Հակոբ Գագիկի Խաչատրյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
248	**23/03/15**	Մելքոնյան Ռուբեն Հովի. Ruben Melkonyan	Օգնություն	80 000
249	**24/03/15**	**GURGEN MELIKYAN MULTI-CHILDREN FAMILY FON-DATION OF KHASHTAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203_2324**	**CAROLANN and GEORGE NAJARIAN DONTION for «ARPEN» center – 5 000 USD**	**2 388 550**
250	24?03?15	Երտանի պետական համալսարան ՊՈԱԿ	Ֆինանսական աջակցություն	1 300 000

Ընդամենը՝ 15 632 551

ԽԵԱ ԾՐԱԳԻՐ (շարունակություն)

	Օգնություն ստացող տնտանիք	Բնակ. վայրը՝ Քաշաթաղի շրջան	Ամսաթիվ	Ընտանիքում երեխաների թիվը	Տրամադրված կովերի քանակը	Հովանավոր
264	*Ալեքսանյան Գեղամ Սարգսյան Գայանե*	գյուղ Գողթանիկ	06.08.2014	6	1	*Սյուզաննա Դեր-Սահակյան ԱՄՆ*
265	*Խամոյան Անի Ասլյան Գևորգ*	գյուղ Քարեգան	08.08.2014	4	1	*Բայյան Ռաֆֆի և Փեղի ԱՄՆ*
266	*Գոգորյան Կարինե Գոգորյան Մխիթար*	գյուղ Մուշ	09.09.2014	7	11	*Հայթայան Լևոն (ԱՄՆ)*
)267	*Մարգարյան Սուսաննա /միայնակ/*	քաղաք Բերձոր	29.09.2014	5	11	*Պետրոսյան Ալեն (ԱՄՆ)*
268	*Բարսեղյան Մարինե Վանյան Շահեն*	գյուղ Վարդուտ	27.12.2014	6	1	*Խաչատրյան Միդա, Չոբանյան Արամ, (ԱՄՆ)*
269	*Հակոբյան Ազնիվ Մկրտչյան Գագիկ*	գյուղ Արտաշավի	27.12.2014	5	1	*Նաջարյան Վարդգես և Մերի, (ԱՄՆ)*
270	*Գասպարյան Լուսինե Ասլանյան Սամվել*	քաղաք Բերձոր	27.12..2014	6	1	*Մարգարյան Ռուբեն և Վալենտին (ԱՄՆ)*
271	*Ավագյան Վիտալի Ավագյան Անուշ*	գյուղ Հոչանց	06.02. 2015	*փախստական*	1	Չանչուրյան Էրիկ ՀՀ, Երևան
272	*Միքայելյան Անդրանիկ Միքայելյան Ալինա*	գյուղ Վակունիս	18.02.2015	*6*	1	Hakobians GBR Mars-La - Tour Str. 21 26121 Oldenburg - Germany
273	*Թևանյան Սևինջ Ավագյան Դերենիկ*	քաղաք Բերձոր	02. 03. 2015	4	11	*Կյուրեղյան Կարուժ և Էմմա (ԱՄՆ)*
274	*Հովոյան Անուշ Հովոյան Գրիգոր*	գյուղ Հերիկ	03.03.2015	*7*	1	*Վանեցյան Կարեն և Վերոնիկա (Շվեյցարիա)*
275	*Աճեմյան Լուսինե*	գյուղ	10. 04. 2015	*5*	1	*Քուշերյան Կատյա և*

	Դալուստյան Հակոբ	Տանձուտ				*Վարդուհի (ԱՄՆ)*
276	*Թովմասյան ժենյա Օրդուբեկյան Սամվել*	գյուղ Մարգիս	08. 05. 2015.	7	1	*Գույումջյան Հակոբ (Քուվեյթ)*
277	*Սարդարյան Վահե*	Իշխանաձոր	08. 05. 2015	4	1	*Քուշերյան Կատյա և Վարդուհի (ԱՄՆ)*

Շարունակելի

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ

ԼՂՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«Քաշաթաղի շրջանային բուժմիավորում» ՊՈԱԿ, 10000655

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն պրն Գ. Մելիքյանին

Անկեղծորեն հիանում և հոգիս բերկրանք է ապրում՝ ամեն անգամ ականատես լինելով Քաշաթաղի համար Ձեր կողմից կատարվող աշխատանքների համար, որն ուրիշները կհամարեին բարեգործություն: Սակայն ինչ-քանով ինձ հայտնի է, բարեգործությունը սովորաբար կատարում են գործարար մարդիկ, ովքեր ունեն նյութական միջոցներ և կարող են նրանց մի մասն էլ - աբերել ինչ-որ նպատակի՝ ելնելով տարբեր նկատառումներից:Դուք, չլինելով գործարար աշխարհի մարդ, ո՞րն է Ձեր տիեզերական ներշնչանքի աղբյուրը, որով կարողանում եքքաշաթաղի վերաբնակեցվող շրջանի համար համախմբել աշխարհի տարբեր ծայրերի բարի մարդկանց, հանգանակել նյութական միջոցներ,, ծառեր աճեցնել, պուրակներ հիմնել, հուշարձաններ կանգնեցնել, սատարել կարիքավորներին, բազմազավակ ընտանիքներին: Ս/թ ապրիլի 11- ին Ձեր ջանքերով Բերձոր ներկայացած «Մեֆլ-Լիֆս» կլինիկայի բժիշկները՝ ղեկավարությամբ Վարդգես Ավագյանի, մեծ և հաճելի անակնկալ էր բուժաշխատողներիս համար: Նրանք մի ամբողջ օր մինչև վերջին հիվանդը մեծ ուշադրությամբ ընդունեցին բոլորին և իրենց վերաբերմունքով ու մասնագիտական հմտությամբ արժանացան դրվատանքի թե՛ հիվանդների և թե՛ տեղի բժիշկների կողմից:
Մենք միշտ սպասում ենք նման անակնկալների և ուրախ կլինենք մեզ մոտ տեսնելու դոկտոր Վարդգեսին իր անձնակազմով:

Շրջանի բուժաշխատողների անունից ընդունեք իմ խորը երախտագիտությունը Ձեր իրապես ազգանվեր աշխատանքի համար:

Հարգանքներով՝ ԼՂՀ ԱՆ «Քաշաթաղի» շրջանային բուժմիավորում ՊՈԱԿ գործադիր տնօրեն՝

/ստորագրություն/ Կ. ԲԱԼԱՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» տնօրեն Գ. ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Իրինա Լևի Սարգսյանս, 2015 թ. ապրիլի 2-ին շրջանի դպրոցներին բաժանելու նպատակով «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» անհատույց ստացա Մերուժան Սիմոնյանի «Հոր- հուր մեծ թիթեռի պատմությունը» գրքի 840 օրինակ: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հիմնադրամին և նրա տնօրենին՝ դպրոցների հանդեպ ցուցաբերած ուշադրության և պարբերաբար իրականացվող օգնության համար:

Բաժնի վարիչ՝ ստորագրություն /Ի. Սարգսյան/

« ԼՂՀ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ՄՈՒԹՅՈՒՆ»

հասարակական կազմակերպություն

14 ապրիլի, 2015

ՍՏԱՑԱԿԱՆՆԵՐ

* * *

Ստացա «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամից երեսուն հատ (180 փաթեթ) բրինձ – ոսպով՝ որպես աջակցություն կորած ազատամարտիկների՝ անկողնուն գամված հիվանդներին:

Ստացող՝ /ստորագրություն/ Վ. Գրիգորյան

Հանձնող՝ /ստորագրություն/

* * *

15 ապրիլի 2015 ք. Սեփանակերտ

Ես՝ ԼՂՀ Զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Ա.Ա. Առուստամյանս, տալիս եմ սույն ստացականը այն մասին, որ սույն թվականի ապրիլի 15-ին «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամից ստացա հարյուր (100) արկղ (վեց հարյուր փաթեթ) բրինձ ոսպով:

ԼՂՀ Զոհված ազատամարտիկների միության նախագահ՝

/ստորագրություն, կլոր կնիք/ Ա. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

* * *

Ես՝ Սվետլանա Մովսիսյանս, խորին շնորհակալություն եմ ուզում հայտնել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «Արփեն» կենտրոնին իմ բազմանդամ ընտանիքին ցուցաբերած գործնական օգնության և աջակցության համար: Ապրում եմ Մարտակերտի շրջանի Ճանկաթաղ գյուղում: Ունեմ վեց անչափահաս երեխա, սպասում եմ յոթերորդին. նրանց մեծացնում եմ առանց հոր: Որևէ սեփականություն չունենք. բնակվում ենք ուրիշի հարկի տակ: Ոչ մեկս չի աշխատում: Միայն հիմնադրամի նպաստն է մեր հույսը:

Կրկին շնորհակալություն գոնե մասամբ մեր հոգսերը թեթևացնելու համար՝

Մովսիսյան Նվեր – 2003 թ.
Մովսիսյան Նարեկ – 2006 թ.
Մովսիսյան Անի – 2007 թ.
Մովսիսյան Մայիս – 2011 թ.
Մովսիսյան Ժենյա - 2012 թ.
Մովսիսյան Միքայել – 2014 թ.
Մովսիսյան ---------- 2015 թ.

* * *

Ես՝ Լիանա Աղաջանյանս, հանդիսանալով հինգ երեխաների մայր, 2014 թվից օգտվում եմ «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» և «Արփեն» կենտրոնի տրամադրած օգնությունից: Ուզում եմ հայտնել իմ խոր երախտագիտությունն ու շնորհակալությունը:

Շնորհիվ Ձեր հիմնադրամի բարեգործական նախաձեռնության՝ իմ չորս անչափահաս տղաներն ու մեկ ամսական աղջիկն այսօր ապահով վիճակում են գտնվում::

Շատ կուզենայի, որ Ձեր հիմնադրամի օգնությունը լիներ շարունակական:

Ստորագրություն /Լ. Աղաջանյան /

Արցախ, Մարտակերտի շրջան, գ. Վերին Հոռաթաղ

հեռ. /097/ 33-09-36

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» հայտարարում է մեծ մարդասեր, հայասեր ու հայաստանասեր, անվանի բժիշկ, Լոս Անջելեսի հայ գաղութի համայնաքային կյանքի կազմակերպիչներից մեկի՝ «Անահիտ» հիմնադրամի բազմամյա նախագահ

ՆԱԶԵԼԻ
ՉԱՐՉՅԱՆԻ

անվան կրթաթոշակ միայն առաջավոր ուսանողուհիների համար:

Շնչափելի գումար ներկայացնող այդ կրթաթոշակը սահմանվում է թե՛ հանգուցյալ Ն. Չարչյանի հիշատակը հարգելու և հավերժացնելու և թե՛ ուսանող երիտասարդությանը համամարդկային վեհ գաղափարներով տոգորելու, ինչպես նաեւ նրան խրախուսելու և ուսման պայմանները բարելավելու նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել Երեւանի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողուհիները, ովքեր ունեն ուսման բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

Մրցույթին մասնակցել ցանկացողները հիմնադրամի հոգաբարձության խորհրդին դիմում են ներկայացնում նրա գործադիր տնօրեն պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի անունով:

Դիմումներն ընդունվում են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի սենյակում մինչև 2015 թ. սեպտեմբերի 20-ը:

* * *

Ուսանողների վարձավճարների

դիմումներն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 20 - ը:

Առաջնահերթությամբ ընդունվում են Քաշաթաղի շրջանի եւ Բերձոր քաղաքի ուսանողների դիմումները, այնուհետև՝ հայկական բանակից զորացրված այն ուսանողներինը, ովքեր ծառայել են սահմանամերձ գոտու զորամասերում և եղել են դիրքապահ, ինչպես նաև՝ հաշմանդամ ազատամարտիկների զավակ ուսանողների, Արցախի ու Ձավախքի միակողմանի ծնողազուկ ուսանողների դիմումները:

* * *

Հայտնում ենք մեր հիմնադրամի բարեգործներին ու համակիրներին, Բարեգործ« պաշտոնաթերթի բոլոր ընթերցողներին, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» Արցախի Բերձոր քաղաքում հայտարարում է

ՀԻՇԱՏԱԿԻ ԾԱՌԱՏՈՒՆԿ

նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին և միլիոնավոր անմեղ զոհերին:

Ամեն ընտանիք կարող է ծառ տընկել նաև իր հանգուցյալների հիշատակին, ինչպես նաև՝ պսակադրության, զավակների կամ թոռների ծննդյան, նրանց, արեւշատության, մկրտության, տարեդարձի եւ այլ հիշարժան դեպքերի առիթներով:

Բերձորում ծառատունկ կարելի է կատարել ամեն տարվա մարտից նոյեմբեր: Ծառատուն հնարավոր է կարել նաև ամռանը, քանի որ արմատակալ ծառերը նախապես դրված են թիթեղյա թաղարների մեջ և հողով կարող են տեղադրվել նախատեսված պուրակում կամ առանձնացված այլ վայրում:

Ծառերի մասնագիտորեն էտումը, բուժումը, ժամանակին ջրելը, խնամքը և պահպանությունը իրականացնում են Արցախի Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում բնակվող հմուտ այգեպանները, ովքեր Ձեր փոխարեն սիրով կկատարեն անհրաժեշտ բոլոր գյուղատնտեսական աշխատանքները:

Յուրաքանչյուր ծառի արժեքն է 100 դոլար, նրան համարժեք եվրո կամ ՀՀ դրամ:

Ցանկացողները կարող են գումարը փոխանցել ստորեւ նշված հաշվեհամարին՝ նշելով ծառի անվանատիրոջ լրիվ ու ճշգրիտ անունը, ազգանունը, հայրանունը եւ ծննդյան տարեթիվը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

FOR EURO TRANSFERS

BENEFICIARY	**GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH**
TAX IDENTIFICATION NUMBER	**01533651**
ACCOUNT NUMBER	**2473800074730010**
BENEFICIARY'S BANK:	**ARDSHINBANK KASHATAGH BRANCH** **SWIFT Code: ASHBAM22**
ADDRESS:	**13 G.LUSAVORICH St.,** **Yerevan, ARMENIA**
INTERMEDIARY BANK:	**CORR.ACCOUT: 100-947721700** **Deutsche BANK AG, Frankfurt am Main** **SWIFT Code: DEUTDEFF**
TRANSFER DETAILS	**ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM**

FOR USD TRANSFERS

BENEFICIARY	**GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH**
TAX IDENTIFICATION NUMBER	**01533651**
ACCOUNT NUMBER	**2473800074730001**
BENEFICIARY'S BANK:	**ARDSHINBANK KASHATAGH BRANCH , ARMENIA** **SWIFT Code: ASHBAM22**
ADDRESS:	**13 G.LUSAVORICH st.,** **Yerevan, ARMENIA**
INTERMEDIARY BANK:	**Deutsche Bank Trust Company Americas**

	60 Wall Street, New York, NY 10005 BKTRUS33
TRANSFER DETAILS	**ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM**

Գումարի փոխանցման դեպքում խնդրում ենք տեղյակ պահել հետեւյալ հասցեով՝
Republic of Armenia, Yerevan, Ave. Mkhitar Heratsi, no. 16, flat 48, G. MELIKYAN.
Tel. (37410) 57-60-73

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝ ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ,, պրոֆեսոր
Համարի նյութերը , շարվածքը , լուսանկարները և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:
Տպաքանակը՝ 99
Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:
Հեռ.՝ 060 710 629, 055 – 52 - 29 – 36, 010 55 - 25 – 37, 010 52 - 29 – 36